ԱՐՊՀ ՇՈՒՐՋ 150 ՈՒՍԱՆՈՂ ԱՅՑԵԼԵԼ Է ԳԱՆՁԱՍԱՐ

Ապրիլի 4-ին ԱրՊՀ շուրջ 150 ուսանող այցելել է Գանձասարի Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցի: Այցելությունը ԱրՊՀ նախաձեռնած «Ճանաչիր Արցախը» պատմաճանաչողական արշավների ծրագրի շրջանակներում էր: Օրվա խորհուրդը Սուրբ Ջատկի կամ Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոնն էր, որը հայ առաքելական եկեղեցու հնագույն և գլխավոր տոներից է: Ուսանողները մասնակցել են պատարագի արարողությանը, իրենց աղոթքն են հղել առ Աստված՝ հանուն մեր բոլոր հերոսների հոգիների հանգստության, անհետ կորածների բարի վերադարձի և մեր բզկտված հայրենիքի շենացման ու հարատև խաղաղության:

Եկեղեցական արարողությունից հետո ուսանողներն իրենց ժամանցն անցկացրել են բնության գրկում՝ կիսվելով հետաքրքիր գաղափարներով ու տպավորություններով:

«Իրավագիտություն» 2-րդ կուրսի ուսանող Կարեն Մարտիրոսյանը օրվա խորհուրդը կապել է մերօրյա իրականության հետ՝ նշելով. «Հայացք ես նետում չորս կողմդ ու հասկանում, որ նորովի ես սիրահարվում ամեն քար ու թփի, հայրենիքիդ բոլոր գույներին, ոտքերիդ տակ կենսականություն շնչող հողին...

Քրիստոսի Հարության խորհուրդն այսօր մեր գիտակցության մեջ ու մեր սրտում պիտի արմատավորի հույսի ու հավատի մի հզոր գաղափար, որ այնպես, ինչպես Հիսուսը խաչվեց ու հարություն առավ մեռելներից, այնպես էլ Արցախն ու ողջ հայությունն է հարություն առնելու:

Մենք խաչված ենք, բայց ոչ՝ մեռած, կոտրված ենք, բայց ոչ՝ ծնկի եկած ու արնաքամ եղած: Ուժ ու կորով մեզ բոլորիս»:

«Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի Նատալյա Մուսայելյանը ուսանողության անունից շնորհակալություն է հայտնել ԱրՊՀ ղեկավարությանը՝ նմանօրինակ միջոցառման և հագեցած օրվա համար:

«Օրվա խորհուրդը, թերևս, ավելի ամբողջացավ նոր ծանոթությունների և հետաքրքիր ժամանցի համատեղումով: Արցախ աշխարհի ամեն մի անկյուն դրախտ է՝ օժտված կատարելության անասելի գեղեցկությամբ»,-նշել է Ն. Մուսայելյանը:

«Եվս մեկ անգամ հիացանք մեր չքնաղ բնությամբ ու Գանձասարի ճարտարապետական յուրօրինակ հորինվածքով: Ես ողջունում եմ նման արշավների կազմակերպումը, երբ համատեղվում է մի քանի կարևոր նպատակ՝ օրվա խորհուրդ, պատմաճանաչողական այցելություն, նոր ընկերներ»,-նշել է արշավի մասնակից «Պատմություն» 2-րդ կուրսի ուսանողուհի Իզաբելլա Սարգսյանը:

Միջոցառումը կազմակերպվել է ԱրՊՀ ղեկավարության, ՈՒՀՏԱ և Կ բաժնի, ինչպես նաև ուսանողական խորհրդի համատեղ ջանքերով:

«ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ամսաթերթ
Հիմնադիր՝ «ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ
Հրատարակվում է 1994 թվականից

Խմբագիր՝ Զարիհե Սառաջյան
Մեր հասցեն՝ Մ.Գոշի 5:
Հեռ.՝ (047) 94 04 91

Տպաքանակ՝ 400
Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում

Իմացի՛ր քո համալսարանի մասին:
Այցելի՛ր asu.am կայք:
www.asu.am

ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄՍԱԹԵՐԹ - ЕЖЕМЕСЯЧНАЯ ГАЗЕТА «АРЦАХИ АМАЛСАРАН»

№ 03(231)
ապրիլ - 2021

ԱրՊՀ ՌԵԿՏՈՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ Է 2019-2020 ՈՒՍՏԱՐՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Ապրիլի 1-ին կայացել է ԱրՊՀ խորհրդի նիստը, որը նախագահում էր ԱՀ պետնախարար, ԱրՊՀ խորհրդի նախագահ Գրիգորի Մարտիրոսյանը:

Նախքան օրակարգային հարցերին անցնելը՝ խորհրդի անդամները մեկ րոպե լռությամբ հարգել են պատերազմում անմահացած հերոսների հիշատակը:

Օրակարգի առաջին հարցով ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը ներկայացրել է համալսարանի 2019-2020 ուսումնական տարում կատարած աշխատանքների մասին հաշվետվություն:

2019-2020 ուսումնական տարում Արցախի մայր բուհն իր գործունեությունը կազմակերպել և իրականացրել է ԱրՊՀ զարգացման ռազմավարական ծրագրով նախատեսված խնդիրներին և նպատակներին համապատասխան՝ առաջնորդվելով իր կողմից որդեգրված առաքելության դրույթներով:

«Անցած տարին մեզ համար ծանրագույն փորձության տարի էր՝ հերոսացումներով ու կորուստներով: Բնականոն հունից դուրս եկավ նաև կրթության ոլորտը, նոր մարտահրավերներ ի հայտ եկան ու պարտադրեցին շուտափույթ լուծումներ գործի դնել»,-նշել է ռեկտորը՝ խոսելով տարեսկզբին պատուհասած կորոնավիրուսային համավարակի, ապա նաև՝ պատերազմի հետևանքով առաջացած խոչընդոտների ու դրանց հաղթահարման ուղիների մասին, որոնցից առանձնացրեց հաշվետու տարում բուհում ներդրված հեռավար ուսուցման նոր հարթակը, որը լավագույն լուծումն էր առկա հնարավորությունների սահմաններում:

«Չնայած առկա բազմաթիվ խնդիրներին՝ արդյունավետ աշխատանքներ են իրականացվել ուսումնական գործընթացի բարելավման, կրթության բովանդակության հարստացման, դասավանդման որակի բարձրացման, մեթոդների արդիականացման և այլ ուղղություններով:

Արցախի մայր բուհը մասնագետներ է պատրաստել բակալավրիատի 38 ու մագիստրատուրայի 24 կրթական ծրագրերով, 5 ֆակուլտետի և 16 ամբիոնի միջոցով:

Հաշվետու տարում բակալավրիատի ուսանողների թիվը կազմել է 2080, մագիստրատուրայի ուսանողների թիվը՝ 359, ասպիրանտների թիվը՝ 10-ը, թողարկվել է բակալավրի 567, մագիստրատուրայի 185, ասպիրանտուրայի 3 շրջանավարտ, բուհ է ընդունվել բակալավրի 591, մագիստրատուրայի 184, ասպիրանտուրայի 5 դիմորդ»:

Խոսելով բուհի գիտական գործունեության մասին՝ ռեկտորը նշել է, որ ուստարվա ընթացքում ԱրՊՀ-ում դասախոսների և ուսանողների մասնակցությամբ կազմակերպվել են առցանց գիտաժողովներ, տարաբնույթ գիտական քննարկումներ և ընթերցումներ: Համալսարանականները մասնակցել են նաև ՀՀ և արտերկրի բուհերում կազմակերպված նման միջոցառումների:

➥ 2

1 ➥ ԱրՊՀ-ն համագործակցության պայմանագրեր ունի Հայաստանի Հանրապետության և արտերկրի 50 բուհերի, գիտական և այլ կառույցների հետ: 2019-2020 ուստարում համալսարանում դասախոսություններով հանդես են եկել ՀՀ և արտերկրի առաջադեմ գիտնականներ, դասախոսներ, հասարակական և քաղաքական գործիչներ:

«Համալսարանի գործունեության նկատմամբ առանձնահատուկ հոգատարության և բարձրացված խնդիրների լուծման, գլխավոր մասնաշենքի հիմնանորոգման համար մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում հանրապետության նախագահին, նախագահի աշխատակազմի ղեկավարին, ԱրՊՀ խորհրդի նախագահին, ԱՀ օրենսդիր և գործադիր իշխանության մարմիններին, ԿԳՄՍ նախարարին, ԱԳ նախարարին, Մարդու իրավունքների պաշտպանին»,-նշել է ԱրՊՀ ռեկտորը:

Համալսարանում իրականացված կարևոր աշխատանքներից ռեկտորը հատկապես առանձնացրել է նորարարական տեխնոլոգիաներով հագեցած կենսաբանության լաբորատորիան, տպարանի հիմնումը, իրավաբանական կլինիկայի գործունեությունը, իրականացված «Հոգեբանական կենտրոնի զարգացում», «Ուսանողների և դասախոսների ուսումնագիտական գործուղումներ», «Մարզական գույքի ձեռքբերում», «Ուսանողական արշավներ», «Դասախոսների և ուսանողների որակավորում», «Կենսաբանության արդիականացումն Արցախում», «Բուհ-գործատու հետազոտություն» ծրագրերը, գիտական գրադարանի ֆոնդի համալրումը:

2019-2020 ուստարում կատարված աշխատանքները իրենց ելույթներով արդյունավետ են գնահատել մանկավարժության և սպորտի ֆակուլտետի դեկան Շահեն Այդինյանը, բանասիրական ֆակուլտետի դեկան Լուսինե Մարգարյանը, 2019-2020 ուստարվա ՈՒԽ նախագահ Լիլիթ Մարգարյանը:

ԱՀ ԿԳՄՍ նախարար Լուսինե Ղարախանյանը, հաշվետու տարում կատարված աշխատանքը համարել է արդյունավետ՝ նշելով. «ԱրՊՀ-ն արժանավայել է կատարել իր աշխատանքը մեր երկրի համար ծանր ժամանակներում: Գնահատելի է այն աշխատանքը, որը կատարվել է հաշվետու տարում»:

Նախարար Լ. Ղարախանյանը մտահոգություն է հայտնել անհետացման շրջանում գտնվող մասնագիտությունների հարցի վերաբերյալ:

«Ունենք անհետացման շրջանում գտնվող մասնագիտություններ, դրա հետ կապված սերնդափոխության հարց: Այս հարցը պետք է դարձնել օրակարգային և հետագա քննարկումներում նախանշել լուծման ուղիներ»,-ասել է նախարարը:

ԱրՊՀ ռեկտորի հաշվետվությունը գնահատվել է բավարար: Խորհուրդն ի գիտություն է ընդունել նաև Արցախի պետական համալսարանի 2020 թ. ֆինանսական տարվա արդյունքների մասին հաշվետվությունը և հաստատել Արցախի պետական համալսարանի 2021թ. ծախսերի նախահաշիվը:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

ՀՐԱՉՅԱ ԱՃԱՌՅԱՆ -145

Ապրիլի 15-ին Արցախի պետական համալսարանում նշվել է աշխարհահռչակ գիտնական, լեզվաբան, անվանի մանկավարժ, ակադեմիկոս Հրաչյա Աճառյանի 145-ամյակը: Միջոցառումը նախաձեռնել է ակ. Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնի դասախոս, բ.գ.թ., դոցենտ Նունե Խաչատրյանը՝ «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողների մասնակցությամբ: Միջոցառմանը ներկա են եղել ֆակուլտետի դեկան Լ. Մարգարյանը, ամբիոնի վարիչ Հ. Ղազարյանը, ամբիոնից դասախոսներ և ֆակուլտետի տարբեր կուրսերից ուսանողներ:

Գիտական ցերեկույթի ընթացքում ուսանողները հանդես են եկել զեկույցներով՝ ներկայացնելով մեծ գիտնականի կյանքն ու գործունեությունը, լեզվաբանական աշխատություններն ու հետաքրքիր դրվագներ լեզվաբանի կյանքից:

«Միջոցառման առանցքային նպատակն էր ոչ միայն ուսանողներին ծանոթացնել անվանի լեզվաբանի գիտական գործունեությանն ու լեզվաբանության համար մեծարժեք աշխատություններին, այլև՝ Հ.Աճառյան մարդ-գիտնականի հետ»,- նշել է Ն. Խաչատրյանը՝ հավելելով, որ նման ձևաչափով միջոցառումները շարունակական բնույթ կկրեն՝ ունենալով ուսուցողական նշանակություն:

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ -107

Ապրիլի 14-ին Արցախի պետական համալսարանում նշվել է Համո Սահյանի ծննդյան 107-ամյակը: Գրական-գեղարվեստական միջոցառումը կազմակերպվել է բ.գ.թ., դոցենտ Զարինե Սառաջյանի նախաձեռնությամբ՝ «Հայ գրականության պատմություն» մասնագիտացման մագիստրատուրայի առաջին կուրսի ուսումնական ծրագրում ընդգրկված «Համո Սահյանը և պանթեիզմը» դասընթացի շրջանակում:

«Այս օրերին ինքներս մեզ ապրեցնելու համար պետք է ամուր կառչենք մեր ազգային արժեքներին, հիմնասյուներին և ապրելու ուժ ստանանք դրանցից: Համո Սահյանի պոեզիան այն սնուցող երակներից է, որ ապրեցրել, ապրեցնում և ապրեցնելու է հային, որտեղ և ինչ իրավիճակում էլ լինի»,- նշել է Զ. Սառաջյանը:

«Այսօրվա միջոցառումը կրկին ու կրկին ապացուցեց, որ բոլոր հավերժ ապրողների առաջին շարքում է Համո Սահյանը և քանի դեռ ունենք այսպիսի սերունդ, դեռ երկար է ապրելու նրա անունն ու գործը, Արցախը և արցախցին»,- նշել է բ.գ.դ, պրոֆեսոր Սոկրատ Խանյանը:

Գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.թ, Նոնա Դավթյանը, խոսելով Հ. Սահյանի պոեզիայի մասին, նշել է. «Ծնվեց Համո Սահյանը և իր ծնունդով նոր գույներ ավելացրեց գրականությանը: Այդ գույները հայրենի բնաշխարհի ներկապնակից են վերցված, նրա պոեզիան սնուցող երակը հայրենի, այլևս երգ դարձած, Որոտանն է»:

Միջոցառման ընթացքում հնչել են ելույթներ Հ. Սահյանի կյանքի ու գրական գործունեության մասին, բնապաշտության, խոհափիլիսոփայության, հայրենիքի և լեզվի հանդեպ նրա տածած սիրո և այլ թեմաներով գրված ստեղծագործությունների վերաբերյալ: Միջոցառմանը ասմունքով հանդես են եկել տարբեր ֆակուլտետներից ուսանողներ:

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ ԱՆՑ ԵՆ ԿԱՑՎԵԼ ՕԼԻՄՊԻԱԴԱՆԵՐ

Ապրիլի 21-ին ԱրՊՀ-ում մեկնարկել է ծրագրավորման օլիմպիադա, որին մասնակցել են մոտ երեք տասնյակ ուսանողներ և աշակերտներ:

Օլիմպիադան նախաձեռնել են ԱրՊՀ բնագիտական ֆակուլտետի «Կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի» ամբիոնի վարիչ, դոցենտ Վ. Առստամյանը և ամբիոնի դասախոսներ Ա. Մնացականյանը, Ս. Երիցյանը և Շ. Գրիգորյանը:

Արդեն 5-րդ անգամ անցկացվող օլիմպիադան այս տարի իրականացվել է նաև առցանց եղանակով՝ ապահովելով մասնակցություն նաև հեռավար տարբերակով: Մասնակիցներին առաջադրվել են հայերեն ձևակերպված ալգորիթմական խնդիրներ, որոնց լուծումներն ավտոմատացված համակարգով թեստային ստուգման են ենթարկվելու: Օլիմպիադան անց է կացվել անհատական ձևով:

«Մեր հիմնական նպատակն է ձևավորել թիմ, որը կներկայացնի մեր համալսարանը միջազգային հարթակներում»,-նշել է օլիմպիադայի նախաձեռնողներից Վ. Առստամյանը՝ հավելելով, որ այսօր մեծ առաքելություն է դրված բուհի առջև՝ վերականգնել երբեմնի պոտենցիալը:

«Նման օլիմպիադաները նպաստում են մասնակիցների մտահորիզոնի և մտքի ճկունության զարգացմանը: Կարծում եմ, որ այսօրվա օլիմպիադայի մասնակիցները կդառնան լավագույն մասնագետներ և կնպաստեն Արցախի Հանրապետության զարգացմանն ու բարգավաճմանը»,-ասել է Վազգեն Առստամյանը:

Օլիմպիադայի արդյունքներն ամփոփելուց հետո անհատական առաջնության մասնակիցներին կտրվեն պատվոգրեր, իսկ մրցանակային տեղեր զբաղեցրած մասնակիցներին՝ նաև պարգևներ:

* * *

Ապրիլի 22-ին Արցախի պետական համալսարանում կազմակերպվել է օլիմպիադա մաթեմատիկա առարկայից, որը նախաձեռնել էր մաթեմատիկայի ամբիոնի վարիչ, ֆ.մ.գ.թ., դոցենտ Լ. Աբրահամյանը՝ ուսանողների ակտիվ մասնակցությամբ: Օլիմպիադայի առաջին փուլին մասնակցել են տասնյակ աշակերտներ և ուսանողներ: Կազմակերպիչների խոսքով՝ հաջորդ փուլը նախատեսվում է կազմակերպել նոր ուսումնական տարում:

«Օլիմպիադան կազմակերպվել է ֆրանսիացի տաղանդավոր մաթեմատիկոս Էվարիստ Գալուայի 210-ամյակի կապակցությամբ, ով ֆրանսիական գիտության պարծանքն է, որի վաստակը շատերին է ոգեշնչել զբաղվել մաթեմատիկա գիտությամբ»,- նշել է Լ. Աբրահամյանը՝ հավելելով, որ նման միջոցառումները կարևորվում են նրանով, որ բուհ-դպրոց կապն ավելի է ամրապնդվում, և աշակերտների մոտ առարկայի հանդեպ հետաքրքրությունը զարգանում է: Օլիմպիադայի արդյունքները ամփոփելուց հետո առաջնակարգ տեղեր զբաղեցրած մասնակիցները արժանացել են պատվոգրերի:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՀ ԱԺ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԵՏ

Ապրիլի 20-ին Արցախի պետական համալսարանում կայացել է հանդիպում Արցախի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ Արթուր Թովմասյանի հետ, որին ներկա էին մայր բուհի դասախոսներ և ուսանողներ: Հանդիպումը կազմակերպվել է համալսարանում մեկնարկած «Արցախ. ներկան և ապագան» ծրագրի շրջանակներում:

Ողջունելով ներկաներին՝ ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը կարևորել է ԱՀ ԱԺ նախագահի հետ նման ձևաչափով հանդիպումը՝ նշելով, որ այդպիսի հանդիպումները լավագույն հարթակ են՝ մտավորականության ու երիտասարդությանը հուզող հարցերը բարձրաձայնելու և ոլորտի պատասխանատուից անմիջապես պարզաբանումներ լսելու տեսանկյունից:

«Արթուր Թովմասյանը եղել է ԱրՊՀ շրջանավարտ և երկար տարիներ աշխատել է համալսարանում: Գնահատման արժանի է համալսարանի զարգացման գործում նրա ունեցած ավանդը: Ռեկտորատը որոշել է ԱրՊՀ 50-ամյակի հուշամեդալով պարգևատրել Ա. Թովմասյանին»,- նշել է ԱրՊՀ ռեկտոր Ա. Սարգսյանը՝ ԱԺ նախագահին շնորհելով ԱրՊՀ 50-ամյակի հուշամեդալ:

Արթուր Թովմասյանը կարևորել է համալսարանականների ծավալած կրթադաստիարակչական ու գիտական գործունեությունը՝ ի նպաստ Արցախի ներկայի և ապագայի: Նրա խոսքով՝ Արցախի պետական համալսարանն արդեն իսկ կայացած բուհ է և ունի իր ավանդույթները:

Բանախոսը ներկայացրել է ստեղծված իրավիճակի հետ կապված առկա խնդիրները, արտաքին քաղաքական մարտահրավերները, Արցախի անվտանգության ու կարգավիճակի հետ կապված որոշ մանրամասներ և պարզաբանել դրանց ուղղությամբ տարվող աշխատանքները:

«Օրակարգային բոլոր հարցերը ուշադրության կենտրոնում են, դրանք բարձրաձայնվում են, և ամեն բան արվում է բանակցությունների դաշտում հաջողություններ ունենալու ուղղությամբ»,- նշել է Ա. Թովմասյանը՝ հավելելով, որ միասնական լինելու դեպքում կհասնենք մեր առջև դրված նպատակներին:

Հանդիպման ընթացքում Ա.Թովմասյանը պատասխանել է ներկաների հարցերին, որոնք վերաբերում էին երկրի անվտանգությանը, սոցիալական, տնտեսական, քաղաքական և այլ ոլորտների:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՀ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՎԻՏԱԼԻ ԲԱԼԱՍԱՆՅԱՆԻ ՀԵՏ

Ապրիլի 23-ին ԱրՊՀ-ում կայացել է հանդիպում Արցախի անվտանգության խորհրդի քարտուղար Վիտալի Բալասանյանի հետ, որին մասնակցում էին համալսարանի դասախոսներ և ուսանողներ: Հանդիպումը նախաձեռնվել է ԱրՊՀ-ում մեկնարկած «Արցախ. ներկան և ապագան» ծրագրի շրջանակում:

Շնորհակալություն հայտնելով Վ. Բալասանյանին ԱրՊՀ այցելելու և համալսարանականների հետ հանդիպելու համար՝ ԱրՊՀ ռեկտորը, ռեկտորատի կայացրած որոշման համաձայն, Վ. Բալասանյանին պարգևատրել է ԱրՊՀ հիմնադրման 50-ամյակի հուշամեդալով:

Հանդիպման ընթացքում Վ. Բալասանյանը խոսել է երկրի իրավիճակի հետ կապված առկա խնդիրների և դրանց լուծման ուղիների մասին: Որպես առաջնահերթություն ընդգծելով անվտանգության խնդիրը՝ բանախոսը այս համատեքստում կարևորել է ինչպես յուրաքանչյուրի անհատական, այնպես էլ թիմային աշխատանքի ու ճիշտ մտածելակերպի ձևավորման ու ամրապնդման դերը արդյունավետության հասնելու համար:

Ապագան ճիշտ կառուցելու, առկա դժվարությունները հաղթահարելու համար Վ. Բալասանյանն ընդգծում է պատմությունից դասեր քաղելու անհրաժեշտությունը:

«1915 թ. Ցեղասպանություն տեսած, 80-ական թթ. ազգային-ազատագրական զարթոնք ապրած, Սումգայիթյան, Բաքվի ջարդեր, 90-ականների պատերազմ տեսած ժողովուրդը պատմությունից պետք է, որ դասեր քաղած լինի, բայց չի քաղել»,-նշել է Բալասանյանը՝ համոզմունք հայտնելով, որ ներկայիս ծանր իրավիճակը կարողանալու ենք հաղթահարել: Նրա խոսքով՝ մինչև 1993 թ. հունիս ամիսը մեր ժողովուրդը ավելի ծանր իրավիճակում է եղել, բայց կարողացել է հաղթահարել:

«Ամեն ինչ, բոլոր կորուստները, բացի մարդկային կորուստներից, հնարավոր է վերականգնել քաղաքական ճանապարհով ու բանակցությունների միջոցով»,-հավաստիացրել է Վ. Բալասանյանը:

Բանախոսը խոսել է նաև Արցախի Հանրապետությունում տարբեր ոլորտներում իրականացվող և իրականացվելիք մոտակա և երկարաժամկետ ծրագրերի, խնդիրների առաջնահերթությունների, աշխարհաքաղաքական զարգացումների, մարտահրավերների մասին՝ կարևորելով նաև ազգային արժեքների, ավանդույթների պահպանման անհրաժեշտությունը ազգային ինքնության ու դիմագծի պահպանման համար:

Վ. Բալասանյանը պատասխանել է նաև ներկաների հարցերին:

ԱրՊՀ ՌԵԿՏՈՐԸ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼ Է ՄԻ ԽՈՒՄԲ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ

Ապրիլի 19-ին կայացած ռեկտորատի նիստում ԱրՊՀ ռեկտորը պարգևատրել է մի խումբ համալսարանականների:

Ռեկտոր Արմեն Սարգսյանը նշել է, որ նախապես ծրագրված էր ԱրՊՀ 50-ամյակի առթիվ կազմակերպել մի շարք միջոցառումներ, որոնք, ցավոք, չի հաջողվել իրականացնել նախ կորոնավիրուսային համաճարակի և ապա՝ 2020թ. սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմի պատճառով:

Ռեկտորի խոսքով, անուրանալի է համալսարանի զարգացման, աշխատանքների պատշաճ կազմակերպման, ուսումնական գործընթացի որակի բարելավման, հավատարմագրման գործընթացում իրենց նպաստն ունեցած համալսարանականների ներդրումը, որի համար բուհի ղեկավարն ԱրՊՀ 50-ամյակի հուշամեդալով պարգևատրել է ԱրՊՀ պրոռեկտորներին, դեկաններին, գիտքարտուղարին և ստորաբաժանումների ղեկավարներին: Շնորհավորելով պարգևատրված աշխատակիցներին՝ ռեկտորը մաղթել է արդյունավետ ու բեղուն աշխատանք՝ նշելով, որ առաջիկայում կպարգևատրվեն նաև բուհի զարգացման գործում ավանդ ունեցած մյուս աշխատակիցները:

* * *

Ապրիլի 21-ին ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը շնորհակալագրերով և գրքերով պարգևատրել է 2020 թ. սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի ընթացքում թիկունքի կամավորական աշխատանքներում ակտիվ մասնակցություն ցուցաբերած համալսարանականներին:

Շնորհակալություն հայտնելով բոլոր մասնակիցներին՝ ռեկտորը մաղթել է, որ այսուհետ համալսարանականների ներուժը ծառայի խաղաղ կյանքում ու գիտակրթական աշխատանքներում:

«Մեծ է ձեր կատարած աշխատանքի նշանակությունը: Այդ օրերին վտանգելով ձեր կյանքը՝ շտապել եք յուրովի ձեր նպաստը բերել հայրենիքի պաշտպանության գործին: Մասնակիցներ են եղել, ովքեր նույնիսկ իրենց փոքրահասակ եղբայրներին ու քույրերին են իրենց հետ բերել ու ներգրավել աշխատանքներում»,-նշել է ռեկտորը:

ԱՄՓՈՓՎԵԼ ԵՆ ՓՈՐՁՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ԱրՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի «Ֆինանսներ» բաժնի 4-րդ կուրսի ուսանողները նախորդ երկու ամիսների ընթացքում ուսումնական և արտադրական փորձուսուցում են անցել «Ֆիդես հիփոթեքային ընկերություն» ՈՒՎԿ-ում, «Արցախբանկ» ՓԲԸ-ի մասնաճյուղերում և ԱՀ ֆինանսների նախարարությունում:

Փորձուսուցման արդյունքների ամփոփման ընթացքում ուսանողները հանդես են եկել զեկույցներով, ներկայացրել փորձուսուցման ընթացքում ձեռք բերված հմտություններն ու կարողությունները՝ կատարելով նաև սեփական վերլուծություններ: Փորձուսուցման ղեկավարները արդյունավետ որակելով ուբշաբաթյա փորձուսուցման գործընթացը, իրենց գոհունակությունն են հայտնել ուսանողներից՝ նշելով, որ վերջիններս առավելագույնս ինտեգրվել են գործընթացին, կարողացել տեսական գիտելիքները կիրառել գործնականում:

ԱրՊՀ ԹԻՄԸ «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ» ԴԱՏԱԽԱՂՈՒՄ ՃԱՆԱՉՎԵԼ Է ՀԱՂԹՈՂ

Ապրիլի 16-ից 18-ը Աղվերանում կայացել է «Միջազգային մարդասիրական իրավունք» թեմայով ազգային դատախաղ-մրցույթ: Մրցույթին մասնակցել և առաջին մրցանակային տեղ է զբաղեցրել ԱրՊՀ թիմը, որի կազմում ընդգրկված էին «Իրավագիտություն» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողներ: Դատախաղը կազմակերպվել էր Կարմիր Խաչի միջազգային կոմիտեի կողմից, որին մասնակցել են թիմեր ՀՀ վեց բուհերից և Արցախի պետական համալսարանից:

ԱրՊՀ «Guardian» թիմը ներկայացրել են «Իրավագիտություն» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողներ Արման Ասրյանը, Անժելիկա Հովսեփյանը և Գոհար Միրզաջանյանը:

«Միջազգային մարդասիրական իրավունքն անգամ պատերազմների ժամանակ պետք է գերակա լինի մարդկային դիմագիծը պահպանելու առումով: Այն, որ միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը ոչ միշտ են պահպանվում, ոչ թե իրավունքի թերի լինելով է պայմանավորված, այլ՝ պետությունների քաղաքական կամք դրսևորելու անկարողությամբ»,- նշել է Ա. Ասրյանը:

ԱրՊՀ ռեկտորը թիմի անդամ ուսանողներին խրախուսել է պատվոգրերով և դրամական պարգևով:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Ապրիլի 8-ին ԱրՊՀ հոգեբանական կենտրոնում կայացել է հանդիպում հ.գ.թ., դոցենտ Կարինե Նալչաջյանի և հ.գ.թ., ռազմական հոգեբան Դավիթ Զամալյանի հետ: Հանդիպմանը ներկա են եղել «Հոգեբանություն» մասնագիտությամբ սովորող տարբեր կուրսերի ուսանողներ: ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՄԲ պրոռեկտոր Վ. Յարամիշյանը ողջունել է ներկաներին և շնորհակալություն հայտնել բանախոսներին ԱրՊՀ ուսանողների հետ հանդիպելու համար:

«Ինձ համար մեծ պատիվ և մեծ ուրախություն է լինել Արցախ աշխարհում և հանդիպել ուսանողության հետ արդեն իսկ հարազատ դարձած վայրում՝ ԱրՊՀ-ում: Հոգեբանությունը շատ լուրջ գիտություն է, որն ունի իր զարգացման պատմությունը և շատ մեծ նվաճումներ: Այս առումով պետք է շնորհավորեմ Ձեզ և մեկ անգամ ևս շեշտեմ, որ շատ կարևոր մասնագիտություն եք ընտրել»,- դիմելով ուսանողությանը՝ նշել է Կ.Նալչաջյանը:

Հոգեբանական գիտությունների թեկնածու, ռազմական հոգեբան Դ. Զամալյանը նշել է, որ նախկինում նույնպես Արցախում լինելու որևէ առիթ բաց չի թողել՝ ուսանողության հետ հանդիպելու համար:

«Մենք մի բռունցք ենք, մի հայրենիք, մի ազգ, և մենք պետք է ամուր միասնականությամբ կառչենք հայրենատիրության գաղափարից, լինենք Արցախի կողքին և սատարենք միմյանց»,-նշել է Դ.Զամալյանը՝ հավելելով, որ պատրաստ է հոգեբանական առցանց դասընթացներ անցկացնել ԱրՊՀ ուսանողների համար՝ հանդիպումների անընդհատության սկզբունքը պահպանելու նպատակով:

ԿԱՅԱՑԵԼ Է ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՇՈՏ ՂՈՒԼՅԱՆԻ ՀԵՏ

ԱրՊՀ-ում մեկնարկած «Արցախ. ներկան և ապագան» խորագրով ծրագրի շրջանակում ապրիլի 29-ին համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության հետ հանդիպել և երկրում ստեղծված իրավիճակի հետ կապված իր տեսակետն ու տեսլականն է ներկայացրել ԱՀ ԱԺ նախկին նախագահ, Արցախի ժողովրդավարական կուսակցության նախագահ Աշոտ Ղուլյանը:

Ողջունելով ներկաներին և շնորհակալություն հայտնելով Ա. Ղուլյանին՝ ռեկտոր Արմեն Սարգսյանն ընդգծել է նրա ունեցած ներդրումը համալսարանի զարգացման գործում և նրան պարգևատրել ԱրՊՀ 50-ամյակի հուշամեդալով ու «Արցախի ժողովրդագիտությունը» աշխատության հատորներով:

Աշոտ Ղուլյանը հանդես է եկել բանախոսությամբ, որի ընթացքում անդրադարձել է պատերազմի հետևանքով ստեղծված իրավիճակին, փոփոխված անվտանգային միջավայրին, արտաքին ու ներքին սպառնալիքներին՝ առանձնացնելով երկրի շահից բխող այն առաջնահերթությունները, որոնց ապահովման ուղղությամբ պետք է շարունակական աշխատանքներ տանել: Այս համատեքստում Ա.Ղուլյանն առանձնացնում է հայրենիքի պաշտպանությունը, Արցախում անվտանգ ապրելու իրավունքի երաշխավորումը, խաղաղության ապահովումը, բանակի վերականգնումը և Արցախը համահայկականության առանցք, համազգային ծրագրերի կենտրոն դարձնելը:

Կարևորելով քաղաքական պայքարը՝ նա նշել է, որ չպետք է այն հասնի ծայրահեղությունների՝ երկրում ստեղծելով քաղաքական ճգնաժամ:

«Քաղաքական կոնսոլիդացիան որոշիչ է լինելու, թե ինչպես ենք կարողանալու կոնսոլիդացնել, համախմբել մեր ուժերը և վերականգնվելու այսքան կորուստներից հետո»,-նշել է Ա. Ղուլյանը:

Երկրի առջև ծառացած ներքին սպառնալիքների հաղթահարման համար բանախոսը առաջնահերթ է համարում պրոֆեսիոնալ կառավարումը, հանրային անվտանգության ապահովումը, կոռուպցիայի և հովանավորչության վերացումը, կադրային ճիշտ քաղաքականությունը, դեմոգրաֆիական խնդիրների լուծման ուղղությամբ տարվող աշխատանքները:

«ԿԻՐԱՌԻ՛Ր ԳԻՏԵԼԻՔՆԵՐԴ ԵՎ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆԴ ՀԱՆՈՒՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ»

Ապրիլի 26-ին Արցախի պետական համալսարանի մանկավարժության և սպորտի ֆակուլտետում կազմակերպվել է կլոր սեղան-քննարկում «Կիրառի՛ր գիտելիքներդ և փորձառությունդ հանուն հայրենիքի զարգացման» թեմայով, որին հրավիրված էին ուսուցիչներ Ստեփանակերտի Ա. Ղուլյանի անվան N2 հիմնական և Շուշիի Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցներից և դասախոսներ մանկավարժության ու հոգեբանության ամբիոնից:

Քննարկումը նախաձեռնել էր մանկավարժության և հոգեբանության ամբիոնի ավագ դասախոսի պաշտոնակատար, մ.գ.թ. Արմինե Բաղդասարյանը:

Քննարկման նախաձեռնող Ա. Բաղդասարյանի խոսքով՝ նման հանդիպումների նպատակն է վեր հանել հետպատերազմական իրավիճակում դպրոցում առկա խնդիրները և դրանց լուծման համար գտնել ուղիներ՝ օգտագործելով նաև բուհի կողմից տրվող գիտամանկավարժական ու հոգեբանական աջակցությունը:

«Պատերազմը խաթարեց նաև կրթության բնականոն գործընթացը՝ առաջացնելով մի շարք խնդիրներ, որոնք այսօր դեռևս շարունակում են տեղ գտնել մեր դպրոցներում: Քննարկման հիմնական նպատակն է վերհանել առկա խնդիրները և դրանց լուծման ուղիները՝ բուհ-դպրոց համագործակցության շրջանակում մասնակից դառնալով այդ խնդիրների հետագա լուծմանը»- իր հերթին խնդիրների լուծմանն աջակցելու պատրաստակամություն է հայտնել մանկավարժության և սպորտի ֆակուլտետի դեկան Շ. Այդինյանը:

ԱրՊՀ-Ն ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌՑԱՆՑ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎԻ

Ապրիլի 2-ին ԱրՊՀ-ն մասնակցել է «Նորանկախ պետությունների համալսարանների ասոցիացիա»-ի նախաձեռնությամբ կազմակերպված «2019-2020 ուստարվա հիմնական արդյունքներն ու ձեռքբերումները ասոցիացիայի անդամ համալսարաններում» խորագրով միջազգային առցանց աշխատաժողովին: Աշխատաժողովին մասնակցում էին ասոցիացիայի անդամ երկրների՝ Մերձդնեստրի, Աբխազիայի, Հարավային Օսիայի և Արցախի պետական համալսարանների պատվիրակները:

Մասնակիցներին ողջունել է աշխատաժողովը համակարգող Մերձդնեստրի պետական համալսարանի ռեկտոր, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ստեփան Բերիլը՝ մաղթելով արդյունավետ աշխատանք ու կարևորելով համագործակցության նշանակությունը առկա խնդիրների համար համատեղ լուծումներ ուղենշելու տեսանկյունից:

Նա իր խոսքում նաև զորակցություն է հայտնել ԱրՊՀ պատվիրակներին՝ Արցախյան 44-օրյա պատերազմում կրած կորուստների կապակցությամբ:

ԱրՊՀ ռեկտորի անունից աշխատաժողովի մասնակիցներին ողջունել է ԱրՊՀ գիտական և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Վալերի Ավանեսյանը՝ կարևորելով նման ձևաչափով անցկացվող համատեղ միջոցառումներն ու քննարկումները փորձի փոխանակման և համագործակցության ամրապնդման տեսանկյունից:

Ռեկտորի ուղերձում ներկայացված էր 2019-2020 ուստարում համալսարանի առջև ծառացած հիմնական խնդիրներն ու խոչընդոտները, դրանց հաղթահարման և լուծման ուղիները, համալսարանի կորուստներն ու ձեռքբերումները:

ԱրՊՀ ռեկտորի ուղերձում նաև երախտագիտության խոսք էր հղված ասոցիացիայի անդամ երկրների համալսարաններին՝ համագործակցության և բուհի ու մեր երկրի համար ծանրագույն ժամանակներում ԱրՊՀ կողքին գտնվելու համար:

Աշխատաժողովին զեկուցումներով հանդես են եկել ասոցիացիայի անդամ բուհերի պատվիրակները, ԱրՊՀ-ից՝ պրոռեկտորները և ուսանողներ:

Երիտասարդության հետ տարվող քաղաքակա-նության մասին զեկուցումով հանդես է եկել ԱրՊՀ ՈՒՇՀՀՏԱԳ պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը:

Համալսարանում կրթական ուղղությամբ կատարված հիմնական աշխատանքներն ու արձանագրված ձեռքբերումները ներկայացրել է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գեորգի Սահակյանը:

ԱրՊՀ գիտության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Վալերի Ավանեսյանը ներկայացրել է համալսարանում գիտության և միջազգային համագործակցության ուղղությամբ արձանագրված հիմնական ձեռքբերումները:

Ուսանողության անունից ոլորտում իրականացված աշխատանքների մասին զեկուցումով հանդես է եկել ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի «Լրագրություն» 4-րդ կուրսի ուսանողուհի Շողեր Սարգսյանը:

Ավարտին մասնակիցները ձեռք են բերել պայմանավորվածություն՝ առաջիկայում կազմակերպելու ուսանողական առցանց գիտաժողով արդիական հնչեղություն ունեցող հիմնախնդիրների շուրջ և հրատարակել գիտական հոդվածների ժողովածու:

«ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԿ ԵՎ ԱՅՍՕՐ» ԹԵՄԱՅՈՎ ԿԼՈՐ ՍԵՂԱՆ-ՔՆՆԱՐԿՈՒՄ

Արցախի պետական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետում կայացել է «Հայոց ցեղասպանությունը երեկ և այսօր» թեմայով կլոր սեղան-քննարկում՝ նվիրված ցեղասպանության 106-րդ տարելիցին: Միջոցառումը կազմակերպվել է պատմության և քաղաքագիտության ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ Նունե Սարումյանի նախաձեռնությամբ, որին ներկա էին գիտական և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Վ.Ավանեսյանը, ֆակուլտետի դեկան Ա. Խաչատրյանը, ամբիոնից դասախոսներ և տարբեր կուրսերից ուսանողներ:

«Իմ մոտեցումն այնպիսին է, որ մենք ոչ թե պետք է ողբալի իրավիճակում մեզ ներկայացնենք, այլ՝ ցույց տանք աշխարհին, որ մեր նկատմամբ ոճրագործութուն է կիրառվել, և մենք չենք համաձայնվում այդ գործողությունների հետ՝ մեր բողոքի ձայնը բարձրացնելով, դատապարտելով և պահանջատեր լինելով մեր տարածքների, մեր հոգևոր-մշակութային կոթողների նկատմամբ, որոնք մեր ազգայինն են: Յուրաքանչյուր ոճրագործություն անկախ ժամկետից պետք է դատապարտվի»,- նշել է պ.գ.թ., դոցենտ Ն. Սարումյանը՝ հավելելով, որ ինչքան երկարաձգվում է ցեղասպանության ճանաչման գործընթացը և ամրապնդվում ժխտողական քաղաքականությունը, այնքան նորանոր ոճրագործություններ են տեղի ունենում:

Պատմության և իրավագիտության ֆակուլտետի դեկան, պ.գ.թ., դոցենտ Ա. Խաչատրյանը նշել է, որ հայ ժողովուրդը հարուստ պատմություն ունի, որով պետք է հպարտանա և առաջ շարժվի:

«Թուրքիայի որդեգրած ծավալապաշտական, ազգայնամոլական, ինչու չէ նաև հետադիմական գաղափարախոսության՝ պանթուրքիզմի արդյունքը եղավ հայ ժողովրդի հանդեպ իրականացրած ցեղասպանությունը: Ինչքան էլ այսօր փորձում է իրեն դրսևորել որպես ժողովրդավարական երկիր, այնուհանդերձ պանթուրքիզմը նրա արտաքին քաղաքականության գլխավոր ուղենիշն է, որի ապացույցը եղավ նաև 20-րդ դարասկզբին Կովկասում ստեղծված անարմատ ու արհեստածին այդ պետությունը՝ Ադրբեջանը»,- իր խոսքում նշել է Ա. Խաչատրյանը և հավելել, որ մենք մի այնպիսի միասնական ազգ ենք, որը պետք է ապրի, ստեղծի, շենացնի և նորը կերտի:

Քննարկման մասնակիցները հանդես են եկել ելույթներով և զեկույցներով, որոնք վերաբերում էին մշակութային եղեռնին՝ որպես Թուրքիայում և Ադրբեջանում ցեղասպանության քաղաքականության շարունակություն, անդրադարձել ցեղասպանության դատապարտման իրավական կողմերին, միջազգային ճանաչման գործընթացին և արդի փուլի իրավական մարտահրավերներին:

«Ցեղասպանության կրկնության հավանականությունը մեր օրերում շատ մեծ է, քանի դեռ միջազգային հանրությունը անտարբեր է մնում այդ խնդրի նկատմամբ: Մեր գերխնդիրը մեկն է. հասնել արդարության, որովհետև այդ երկուսն էլ մարդու կյանքի և հայրենիքի կարևորագույն իրավունքների առանցքային կետերն են»,- նշել է «Հայոց պատմություն» մասնագիտության մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի Մարինե Հովակիմյանը: